299

№ 67

ԽԱՉԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2004

ԽԱԼԹԱԿ Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ 1319-ԱՀ

ՌՕԳԻՆՍՈՆ ՀԱՄԱՌՕՏ

ՅԱՆԳՂԻԱԿԱՆԻՆ ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Ի ՀԱՅ

ՊԱՐՈՆԻԿ ԽԱՉԻԿ Թ. ԱՎԵՏՈՒՄԵԱՆՑ

ԸՀԱՆԵՐՑ Ս. ՍԱՆԴԽՏՈՑ

ՑՕԳՈՒՏ

ԿԻՐԵԼԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵՍՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱԶԳԱՍԻՐՈՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ
Ի ԿԱԼԿԱԹԱ
1850

ԽԱԼԹԱԿ Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ

214-99

ՑԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ Թ. Խ. ԱՎԵՏՈՒՄ

Պատուելի Հայր

Ցեց ամենաբարի Արարչիս, եթէ զԾնողս ճանաչէի ինձ բարերարս և երախտաւոր՝ և Ջանայի պատուել և մեծարել՝ ըստ տկար կարեացս, ոչ ինչ աւելի առնէի, քան եթէ կատարել զպատուիրանն Աստուծոյ։ Բայց եթէ ճանաչելով զՁեզ և ծնող ինձ՝ և ճշմարիտ բարեկամ Ուսուցնաբանիս՝ յորում զհոգին գիտութեան դիեմ, կրկնապատիկ առաւելու երախտագիտութիւնս ուստի և այս իմ զուշնաքեայ, խակակութ։ բայց և առաջին պտուղ գրաւորական վաստակոց Ի ձերոց ձեզ վերընծայեմ բնական և վերբնական օրենքաց, զոր յուսամ սիրով և գթութեամբ ընկալեալ՝ յաւելցիք առիս զգութ և զօրհնութիւն Ձեր։

Ամենախոնարհ ծառայ և Որդի ձեր

Խ. Թ. ԱՎԵՏՈՒՄ

ԱԶԴ

ՅԸՆԹԱՑՍ աշակերտութեան իմոյ ի Սուրբ Սանդուխտ դպրոցի՝ յաւելի զթարգմանութիւն զայս ի պէսպէս դասական դարձուածս իմ և յօրինուածս։ Զոր օժանդակութեամբ Պատուելի Բարեկամաց Հայկական Ուսմանց տպագրութեամբ ի լոյս ընծայեցի յօգուտ ազգային ընթերցասէրաց։

Էր թէպէտև առաջին թարգմանութիւն ընդարձակ վարուց Ռօպենսոնի տպագրեալ ի Վենետիկ, այլ զի բարբառ նորա անհասկանալի լինէր՝ յեղաւք զայս ի հայրենին և ի համառօտն, յօրինակ՝ յօգուտ՝ և ի մխիթարութիւն այնպիսեաց՝ որ պէսպէս դիպուածով վշտանան յայսմ վաղանցիկ և ի յաւալից աշխարհի, և ոչ հասկանան զխորհուրդս երկնից, թէ՝ զոր սիրէ Տէր, խրատէ։ տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի։ Որ այսպէսն ընթեռնուցու և օգտիցի ի սմանէ՝ փառս հանցէ Աստուծոյ։

ԹԱՐԳՄԱՆԻՉ։

ԽԱՉԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՊՈՂԵՆՍՈՆ ՀԱՄԱՌՕՏ

Ի՞ՆԱՅ ես ի բարեմոյն ծնողաց՝ ի քաղաքին Դ՚օրկայ, ուր Հայր իմ եկեալ ի Բրիմենայ՝ կալաւ զբնակութիւն, յետ շահելոյ անձին զերևելի ինչ փարթամութիւն վաճառականութեամբ։ Ո՞ իսկ իմ՝ ի մանկութենէ անտի սկսան յղանալ զխորհուրդ աստանդանաց։ Հայր իմ՝ ստէպ յորդորէր զիս՝ զի պարապեցայց գործոյ իրիք։ և մայրս մատուցանէր միշտ զաղերխարշ մաղկատանս իւր։ սակայն ոչինչ կարէին ոգեքս ապդել ցանկութեանս մտանելոյ՝ ի ծով։ Ընդուր վերջին անձկութեանց հօր և մօր իմոյ վասն բաժանման ինչ յինքեանց, և որպէս

ԽԱՉԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

թէ հակամիտեալ 'ի կորուստ՝ խլեա-
տացուցի զիս ինքն ընդդէմ խոհական
խրատուց առատագութ ծնողաց իմոց, և յաւուր միում գնացեալ 'ի
Ֆուլ՝ պատահեցայ միում յընկերաց
իմոց, որ ընդ այն օրեր գնայր 'ի ծով
նաւու հօրն, և հեշտեաւ համոզեաց
զիս 'ի նոյն։

'Ի 1 Սեպտեմբերի 1651, մտի 'ի
նաւն՝ որ երանէր 'ի Լոնդոն, և առանց ծանօթս ինչ տալոյ ծնողաց իմոց զյանդուգն և զհամարձակ ձեռնեռիցութենէս՝ առագաստ բացի 'ի ջուն.
բայց չէ երեալ նաւուն 'ի Ֆմբերոյ՝
մինչ ահա շնչեաց հողմն, և յարեաւ
ծով յոյժ սոսկալի ահեղութեամբ։
Այս առաջին անգամն էր ծովամարութեան իմոյ, հիւանդացայ շատ,
և միտք լցան արհաւրօք։

'Ի Վաղիւ դադարեցաւ հողմն,

և Ծոմն հանդարտեցաւ , այլ ոչ ևս
ծովահարեցայ . և ընկեր իմ Ծիծաղէր
զերկչոտութեամբ իմով , ծայր առ-
նէր զծանրաբարոյութեամբս , և բա-
ժակաւ օշարակի ցքենուոյ գրեթէ ար-
բեցոյց զիս : Այսու օրինակաւ ընկ-
ոյզ զապաշաւ իմ և զամենայն զգաստ
մտածութիւնս : Զանակն պարզմնաց
ընդ բազում աւուրս . և մեք 'ի վերջոյ
եկաք 'ի դադարս Յարմուրթայ , ուր
խարխս արկաք սպասել Հողմոյն :
Յետ կարոյ անդ զչորս կամ զհինգ աւ-
ուրս , Հողմն սկսաւ փչել սաստկու-
թեամբ . սակայն զդադար մեր հա-
մարեալ անքոյթ որպէս զնաւահան-
գիստ՝ անցուցաք զժամանակն շուայ-
տութեամբ և խեղկատակութեամբ ,
մինչ ցութներորդ առաւօտն , յոր-
ժամ Հողմն սաստկացաւ , և եղև ա-
հագին փոթորիկ ։

Այժմ ակայ տեսանել զերկիւղ յերեսս անդ նաւազանցն, և յորժամ նաւապետն անցանէր զենև՝ լուայ 'ի նմանէ ասել մեզմով, "Ցէր ողորմեա՛ մեզ, զի ամենեքեան կորնչիմք," Ապաշաւելոյ ժամանակ անցեալ էր ինձ այժմ, որում յայտնապէս ոտնհարեղէ, մանաւանդ թէ՝ և խստացայ իսկ ընդդէմ այնմ, և կարծեցի թէ մի՛ միայն այս անցանելոց էր ըստ առաջնոյն։ Բայց զայսպիսի տխուր երևոյթ երբէք չէի տեսեալ յառաջն, ծովն բարձրանայր լեռնանման, և հարկանէր ընդդէմ մեզ միանգամ յերիս կամ 'ի չորս վայրկեանս, նաև մի ընկղմեցաւ սակաւուք հեռի 'ի մէնջ, երկու նաւք՝ որք մերձենային մեզ, ընկեցին զկայմս իւրեանց 'ի կողաց, և երկրորդ նաւապետին և նաւատին ապաշեցին զնաւապետն թոյլատալ և ինքեանց հա-

տանել զմեր առաջնակոյսն։

Ի մէջ գիշերի մի ի նաւաստեացն՝ որ գիտմամբ ելեալ էր ի փորնաւին, աղաղակեաց թէ ահա նաւն ընանի ջրով, և անդէն իսկ չորս ոտնաչափ ջուր էր ի նմին. յորոյ վերայ ամենեքեան կոչեցան դէպ առ ջրհանն։ Աշխատեցայ և ես ընդ այլոց, բայց ջուրն յաղթէր մեզ. և յայտնի երևեցուցանէր թէ նաւն սուզանելոց էր։ Ինչ և լցէ հողմն գադարել սկսանէր, նաւապետն արձակեաց զթընդանօթ վասն օգնականու թեան, և նաւ մի թեթև՝ որ վերծեալ էր ի վնասէն՝ և յառաջոյ մեր կայր, համարձակեցաւ առաքել զմակոյկ իւր յօգնութիւն մեզ ի վտանգս կենաց իւրեանց։ Ո՞տաք ամենեքեան անդր. բայց հազիւ թէ թողեալ էաք զնաւն ճիրվ ժամու՝ յորժամ տեսաք զնա

սուղանիլ։ Որովհետև անկարևոր էր նաւակին ժամանել 'ի նաւն՝ որում պատկանէր։ զուն զործեցաք հասանել ցամաքին։ մասամբ թիավարելով և մասամբ յառաջ մղելով յաթեացն։ 'ի վերջոյ բազում դժուարութեամբ հասաք 'ի ցամաքն։ և գնացաք յԱրմուԹ։ ուստի հաստատեցի 'ի մոի Ճանապարհորդել ցամաքաւ մինչև 'ի Ռոդոն։

'Ի ժամանիլ իմում յայն քաղաք։ նաւապետ նաւու իրի՝ որ եղեալ էր 'ի Ժողակոդմանն Գուինու։ հաՃեցեալ ասաց։ զի եթէ նաւորդ լինէի ինքեան։ ծախուց պէտք ինչ ոչ էին ինձ։ և եթէ տանէի ընդ իս և ինչ ինչ՝ յաջողէին տուր և առիկ լինել յառանձինն յիմ օգուտ։ Բաջալերեալ 'ի հրաւիրմանէ աստի՝ ժողովեցի զքառասուն ոսկիս ստերլինաց։ որ-

ովք գնեցի զայնպիսի խաղալիս և ըզ-
անոտիս, զորոց նա խորհուրդ ետ ինձ։

Այս նաւարկութիւն եղև մի յա-
մենաթշուառացանոի՝ քան զոր երբէք
արար մարդ. զի այն ինչ ուղղէաք ըզ-
նաւն ընդ մէջ Դանարեան կղզեաց և
եզերացն Աֆրիկոյ, եհաս ի վերայ մեր
յանակնկալ պահու ընդ արշալոյսն՝
ծովասպատակ ոմն Արաբիտանացի
ի Այի քաղաքէ. որ առագաստալեր
հոտամուտ եղև մեզ. անձնատուր լի-
նել պարտաւորեցաք և կալանաւոր
տարաք ամենեքին մեք 'ի նաւահան-
գիստն Այեայ, որ պատկանէր Արա-
բիտանացւոց. ուր պահեցայ 'ի սալա-
ւէն ծովասպատակաց յիւր 'ի բա-
ժին, որ արար զիս ստրուկ իւր։

Ունելով տեառն իմ՝ զմի ծ մա-
կոյկ Անգղիական նաւու մերոյ, ա-
ռաւել զայն 'ի նաւակ զբօսանացն։ Ցշա-

նաւորեալ էր զօր մի ելանել ընդ
երից կամ չորից երեսելի Սաւրիտա-
նացւոց. բայց յառաւօտուն եկն 'ի
նաւ անդր, ասելով ինձ թէ՝ Հրաւի-
րեալք իւր հրաժարեալք էին 'ի գը-
նալոյ. և հրամայեաց ինձ ընդ սպա-
սաւորին և տղային նաւել ընդ ծովն
և որսալ զձուկն, զի բարեկամք ընթ-
րելոց էին ընդ իւր։

Յայսմ վայրկենի յոյս աղատու-
թեան իմոյ սլացաւ յուշ իմ. և որ-
չիցն պատրաստել զիս 'ի նաւ ագնա-
ցութիւն։ Ասացի Սաւրիտանացւոյն
թէ ոչ պարտիմք համարձակիլ ու-
տել զհաց տեառն մերոյ. ասաց ՀԸՇ-
մարիտ է. և եթեր պաքսիմատս մեծաւ
սակառեաւ լի և զերիս տակառս ջրոյ
'ի նաւակ անդր։ Գիտէի ուր լինել
և արկեղ գինւոյ տեառն իմոյ, որ 'ի
կազմուն թենէն երևէր յաւարի առեալ

յԱնգղիացւոյ ումեքէ. և տարի զնոսա 'ի նաւակն զոյգ ընդ մեծի ձուլոյ մամոյ և կծկի դերձանի, որով յետոյ կազմեցի մամեղէնս, և ևս տապարի միոյ, սղոցի և ուրագի։ Մինչ Նուրն, զոր մեք Ա՛լի անուանէաք, դեռ 'ի ցամաքին էր, ամենայն ինչ պատրաստ լինելով՝ նաւեցաք արտաքս 'ի նաւահանգստէն յորսալ, բայց կամաւ ոչ ինչ ըմբռնելով՝ ասացի Ա՛լիհայ թէ այսպէս ոչ լինէր, այլ թէ պարտ էաք յառաջանալ և ևս։ Որում հաւանելով նորա զառագաստ ամբարձաք, և իմ ունելով զղեկն հեռացուցի զնաւակն իրրև միով փարախաւ, և ապա կացուցի, որպէս թէ որսալոց իցեմ։ Ուրանօր տալով զղեակն 'ի ձեռս մանկանն, յառաջ ոստեայ, և կոչանալով 'ի յետուստ Ա՛ուրիտանացւոյն, առի զնա յանկարծակի,

և ընկեցի 'ի ծովն ։ ել նա խսկոյն ։ զի լողայր քաջ նման սպնդան ։ և գոչեաց առ իս առնուլ զինքն 'ի ներքս։ քայց առեալ իմ զհրացան մի ։ ուղղեցի դէպ 'ի նա ։ և ասացի եթէ մերձեն այր 'ի նաւակն՝ հարկանէի ընդ գլուխ նորուն ։ այլ այն զի ծովն խաղաղ էր ։ կարէր հեշտիւ հասանել 'ի ցամաք ։ և զի ընտիր լող էր ։ ոչ ինչ երկեայիմ թէ հեշտեաւ եհաս անդր ։

Յորժամ գնաց նա ։ դարձայ ես առ տղայն զոր կոչէին Օ ուրի ։ և ասացի նմա՝ Օ ուրի. եթէ հաւատարիմ եղիցիս ինձ ։ արարից զքեզ այր երևելի։ Դպտեցաւ մանուկն 'ի դէմս իմ։ և խոստացաւ շրջել ընդ իս յաշխարհ ամենայն ։ Այնքան ահաւոր էր երկիւղն անկանելոյ իմ միւսանգամ'ի ձեռս տեառն իմոյ ։ մինչ նաւ-

արկեցի զՀինգ ուռուբս շարունակաբար առանց իջանելոյ 'ի ցամաք, և հոլմն գառնալով 'ի հարաւային կողմն, իշխեցի խարխախ արկանել 'ի բերան գետակի միոջ։

Հազուստ անգամ յետ այնորիկ, պարտաւորեցաք իջանել 'ի ցամաք վասն ջրոյ, և անգամ մի յատկապէս ընդ արշալոյսն Ուրի մեզմաւ կոչեաց զիս, և ասաց, թէ բարիք լինէր մեզ հեռանալ 'ի ցամաքէն, զի տեսնասցուք, ահա անդր կայ առիւծ մի 'ի խոր քուն իւրում։ Ցի զՀրացանս, և նպատակեցի 'ի գլուխ անդր նորա, բայց ունելով նորա զոտն վերացեալ քան զքիթն, գնտակն խորտակեաց զմի 'ի արունիցն։ Ոտեաւ գոռալով, բայց անկաւ անդրէն, և գոչեաց այնպէս ահագին, զորոյ նման չէի լուեալ, արձակելով միւս անգամ զՀրա-

ցանն հարի զնա 'ի գլուխն, և տեսի զնա անկանել։

Որոշեցի հանել զմնրթի նորա, և գնալով 'ի ցամաքն, տղայն և ես միասին՝ 'ի գլուխ տարաք զնոյն։ Յետոյ տարածեալ զայն 'ի վերայ տանեաց

նաւակին, չորացուցաք յարևու, և յետոյ պիտոյացուցաք մեր ընկողմանելոյ 'ի վերայ։

Յետ իբրև տասն աւուրց, այն ինչ ուղղէի զգնացս իմ 'ի ծով անդր, Օ ուրի կոչեաց առ իս երկիւղիւ՝ ասէր, տէր, ահա նաւ մի։ երևակայելով թէ նաւ տեսանն իւրոյ էցէ, զհետ ոնդեալ մեզ։ Տեսի՝ որ Փորթուգալացւոց էր, և իսկոյն դիմեցի 'ի ծովն ամենայն առագաստիւք զորս կարացի սփռել։ տեսին զիս օգնու թեամբք դիտականց իւրեանց, և փութացին զառագաստս, զի ժամանեցուցցեն ինքեանց։ Նաւաստի ոմն Սկոտացի կոչեաց զիս 'ի նաւէ անտի, և պատասխանեցի ես։ թէ խուսափեալ էի 'ի Մաւրիտանացւոց Սալէայ։ Հատ սիրով ընկալան զիս 'ի ներքս, ամենայն կահուք իմովք հանդերձ։

Բարի եղև մեզ յոյժ նաւարկութիւնն մինչ 'ի Բրազիլս, և ժամանեցաք 'ի Գոյն Ամենայն Սրբոց, իբրև 'ի քսան և երկու աւուրս։ Զնուաբարոյ նաւապետն յանձն արար զիս գովութեամբ բարեմիտ առն ուրուն տնկագործի, առ որում կացի մինչև ուստայ զեղանակ տնկելոյ և շինելոյ զշաքար, զկնի որոյ գնեցի ինձ զբաժին իմն գետնի, և եղէ տնկագործ։

Ինակեցայ աստ իբրև զամս չորս, և ծանօթացայ բազմայ 'ի վաճառականացն։ բազում անգամ խօսեցեալ էի ընդ նոսա զեղանակէն գնելոյ զխափշիկ գերիս 'ի կողմանս Գուինիոյ, և հաճեցեալ նոցա ընդ առաջարկութիւնն, դիւրաւ համոզեցին նոքա զիս նաւարկել այնր աղագաւ։ Պատրաստեցաք զնաւ մի իբրև 120 թանաչափ

բեռնաւորու թեամբ , որ տանէր զ 6
թնդանօթս և զչորեքտասան մարդիկ ,
բաց ի նաւապետէն , յորդւոյ նորուն ,
և յինէն ։

'Ի սմին նաւու առագաստեցի ։
Ընդոստակ էր հողմն մեզ իբրև զերկո-
տասան աւուրս , բայց ընդ անցանել
մեր ընդ Հասարակածն , սաստիկ փո-
թորիկ ելեալ մղեաց զմեզ բոլորովին ար-
տաքոյ հաշւոյ մերոյ , և ընդ աւուրս
բազումս , ամենեքին որք 'ի նաւի
անդ էին՝ ոչ ակնկալէին փրկութեան
իւրեանց ։ Յայսմ թշուառութեան՝
մի յարանց մերոց վաղ քաջ յառա-
ւօտու միւսմ գոչեաց՝ ահա ցամաք ,
և ընդ վազել մեր արտաքս 'ի սենե-
կէն , յուսով տեսանելոյ թէ ուր է-
աքն , հարաւ նաւն զաւազուտիւ ։ Ոչ
դիւրին նկարել զարհաւ իրս մեր , զի
որովհետև կատաղութիւն ծովուն մեծ

էր ։ կարծեցաք թէ նաւն զկնի սա-
կաւ ըստէից ջախելոց ելէ ի փշուրս ։
Ունէաք զմնակոյկ մի ի նաւին ։ զոր կա-
ղեալ օժանդակի նաւապետին ։ և օգ-
նութեամբ մեացեալ մարդկանն ։ ձը-
գեաց ի կողմանէ նաւու ։ և ամենեքին
մտանելով ի նա ։ յանձնեցաք զմեզ
գթութեան Աստուծոյ ։ Վասրեցաք
դէպ ի ցամաքն ։ բայց յետ թիելոյ
կամ մանաւանդ վասրեալ լինելոյ ելբ-
րև վարսախտաւ միով և կիսով՝ ալի մի
լեռնաչափ եկն թաւալգլոր ի յետուստ
կողմանէ մերմէ այնպիսի կատաղու-
թեամբ՝ մինչ կործանել իսկոյն զմա-
կոյկն ։ և բաժանել զմեզ ի միմեանց ։
Ելիս այս տարաւ զիս ի ցամաքն կոյս ։
և յետ սպառելոյ զինքն ։ դարձաւ և
եթող զիս զոգցեալ ի վերայ չոր ցամա-
քի ։ բայց կիսամեռ ։ Այցի տակաւին
անշարժ ցվայրկեանս ինչ առ ի շունչ

առնուլ, մինչ հեռացան ջուրքն, և ապա վազս առեալ բովանդակ ուժովն որ մնացեալ էր յին՝ փութացայ դէպ 'ի ցամաքն։ Հասի և ելի մագլցի 'ի վեր ընդ գահս ծովեզերին, և նստայ 'ի վերայ սիզոյ։

Ղ ազվազակի յետ այնորիկ՝ գտի զծովն խաղաղացեալ, և զտեղատուութիւնն այնքան հեռագոյնս ձգեցեալ, մինչ զի դիւրաւ կարէի մի ոչ ենալ 'ի նաւն քառորդաւ միով մղոնի։ Ղողացի երկիցս շուրջ զնովաւ, և յերրորդում նուազի նշմարելով զփոքրիկ լաւ առասանի կախեալ 'ի վայր, կալայ զայն, և ելի 'ի վեր 'ի նաւն։ Տեսի որ գոգցեալ լի էր ծոց նաւուն ջրով, բայց առ մեծի խնդութեան իմոյ՝ զբտի զամենայն պաշար նաւուն անթացս բոլորովին։

Որովհետև գտի անդ զքաղցումս առ-

ԵՌԱԾԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
դասատու
ԱՄՍՕՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
274-99

ազատակալս , և զքանի մի ստուար գերանս , ի վայր կոխեցի զնոսա առասանօք ի կոպմանէ նաւուն , և ի-ջանելով կապոտեցի զնոսա ի միասին , և արարի ինձ լաստ ։ Ապա բացեալ դատարկեցի զերիս յարկեղաց նաւա-վարացն , ի ջուցի 'ի վերայ լաստին , և յցի զնոսա հացիւ , ապխտով , կամ չոր մսով ինչ այծու , և երեք պան-լով քաղանդայ , բազում տիզով սրուակաց , յորս էին զօրացուցիչ հե-զուկք և այլ պիտանի իրք ։ Ելեալ զայսոսիկ՝ զտի և զերկուս կամ զերիս կիսաբեկ թիակս մակուկի , որք պի-տոյացան ինձ առ 'ի յառաջ մղելոյ զլաստն ։

'Ի վայրիս անդր հաստատեցի 'ի մտի դառնալ անդրէն միւսանգամ , Լաստ իմ շատ ծանրաշարժ լինելով , ըղացի դէպ առ նաւն , և շենեցի զմիւս լաստ

փոքրիկ, յորոյ վերայ զետեղեցի զերկուս կամ՝ զերիս քսակս բեւեռաց և ցցից, զքանիմի գործիս և հրացանս, զերկուս տակառս ոմբոց հրացանի, զմեծ պարկ շաղ գնտակաց, զբովանդակ զգեստս արանց՝ զորս կարօղի գտանել, զառագաստ մի քառակուսի, զմահիճ և զապաստ անկողնոյ, և քիչ զամենայն ի ցամաք անդր՝ ի մեծագոյն մխիթարութիւն ինձ։ Սաստիկ յոյժ հնչէր հողմն ընդ գիշերն ողջոյն, և յառաւօտու այլ ոչ երևեցաւ նաւն։ Զոգայ արդ՝ ի խնդիր տեղւոյ իրիք ուր հաստատելոց էի զընակութիւն իմ. զտի զփոքրիկ տափարակ ինչ՝ ի կողէ բլրոյ իրիք, որ զառվեր սեպանայր որպէս զպարիսպ ինչ տան, մինչ զի ոչ ինչ կարէր ի ջանել առ իս՝ ի վերուստ անտի։ Ի կուսէ այսր բլրոյ էր բացուածք ինչ, նման մտից այրի, աղ-

ռաջեաւ որոյ որոշեցի հարկանել զերբ-
ձ՛ութ իմ։ Ցափարակս այս ոչ էր ա-
ւելի քան զերկերիւր կանգնաչափս ի
լայնութեան և երկպատիկ յերկայ-
նութեան, ինչանելով դէպ ի ծովն։

Նախքան զկանգնել խրթձին իմոյ
զծեցի զկիսաբոլորակ զառաջեաւ այ-
սին, որ տարածէր քան կանգնաչա-
փըս, և ՝ի շրջանակի այսմիկ տնկեցի
զերկուս շարս հաստատուն ցցից՝ խրե-
լով զնսա ՝ի գետնի որպէս զցանկա-
պատ, իբրև զհինգ և կէս ոտնաչափ-
իւ ՝ի վերոյ քան զերկիր, սրեալ
՝ի ծայրսն։

Ապա առի զկտորսն մալխոյ զոր
հատեալ էի ՝ի նաւի անդ, և եդի ըզ-
նոսա ՝ի շարս մի ՝ի վերայ միւսոյ մինչ
՝ի վեր, որով ամրացաւ ցանկն յոյժ։
Զ ուստ բացի կարձ սանդ խով ելա-
նելով ՝ի վեր ՝ի գլուխն, զոր՝ յորժամ

մանէի՝ ամբարձեալ ի ներքս առնուլ ընդ հետ իմ։ Ի մէջ այսր ցանկի կրեցի հետ զհետէ զամենայն հարստութիւն իմ, զպաշարս՝ զզէնս և ըզհամբար իմ. և արարի զմեծ ինն վրան ապահովել զիս և զնոսա յերկանակէն. իբրև կատարեցի զայս՝ սկսայ Հանապարհ բանալ ինձ ի բլրին, որ կակուղ էր ըստ բաւականին. կուտելով զամենայն զհող և քարան ի մէջ ցանկոյն. և այսպէս ունէի այր մի ի յեստուստ խրթՀի իմոյ։

Գտեալ էի ի նաւէն զքանի մի գրիչս, վանքն, զթուղթ. զմաթէմաթիգական գործիս ինչ, և զերիս ընտիր Աստուածաշունչս, հանդերձ այլ և այլ գրովք. զորս զգուշութեամբ պահեցի։ Բերի ևս ընդիս ի ցամաք զերկուս կատուս, և շուն մի լողալով եկն. որ հաւատարիմ ծառայեաց

ինձ 'ի բազում ամս, մանաւանդ զի այնքան լաւ ընկեր եղև իմ, մինչ զի ոչ երբէք կարօտէի իմիք օգնականութեան նորա, և միայն պակասէր կարողութիւն խօսելոյ աւ լինելոյ ախորժելի բարեկամ։

Հազիւ թէ աւարտեցի զքնակարան իմ, մինչ ահա մերձ եղէ թողիլ ընդ փլատակօքն։ Օ ի այն ինչ գործէի առ մուտս այրի իմոյ՝ յանկարծակի թօթափեցաւ հողն 'ի յարկէ այրին և 'ի կողաց բլրոյն 'ի վերուստ գլխոյ իմոյ։ Սատանայի զարհուրեցայ և կարծեցի եթէ փլաւ թաղ այրիս։ Երիցս ցնցեցաւ 'ի միջոցի ութն վայրկենից այնպիսի սասանութեամբ՝ որ հաւատամ տապալէր զամրագոյն շինուածս։ և 'ի կէս մղան հեռաւորութեան կտոր մի մեծ ժայռի թաւալ գլոր անկաւ յերկիր զարհուրելի

ձայնիւ. զորոյ պէտն չէի երբէք լը-
ուեալ։ Երկրաշարժութիւնն որ ցա-
ծուցեալ էր զտաճարս իմ, և ուշա-
թափեալ էի, մինչ սոսկալի ձայնս այս
զարթոյց զիս անդէն։ Ի սակաւ ժա-
մուս փոքրատեցաւ երկիւղ իմ. և զենուի
յաճախակի զոյժս վասն ուսելեաց.
որոց ճարսն պիտոյանոյր ինձ վասն
լապտերի իմոյ. որ էր կաւեղէն ա-
նօթ մի թրծեալ յարևու, և զխծուծ
'ի գործ ածէի 'ի տեղի պատրուգի։ Ի
մէջ աշխատութեանս՝ այն ինչ հետա-
զօտէի 'ի միջի իրացս՝ գտի զիս քրիստ
պարկ մի պատիճաւոր ցորենոյ, և
պէտս ունելով պարկին՝ թափեցի ըզ-
ցորեանն 'ի կողոց տնկութեան իմոյ.
այս եղև նախ քան զտաստիկ անձրև
ինչ, և իբրև ամսոյ վերայ զկնի՝ տեսի
զքանի մի դալարագեղծ ելս բուսեալս
'ի գետնի. բայց որքան մեծ զարմա-

ցուցն իմ, յորժամ յետ սակաւուց տեսի իբրև զտասն կամ զերկոտասան հասկս ի վերայ նոցա։ Յետ ժամանակի անկաւ ի միտս իմ պարկ ցորենոյն. և համարեցայ զայն հրաշիւք արտադրեալ։

Ընդ ցորենոյս այսորիկ բուսան և քանի մի ծիլք ոլիզայ. որք առաւել արժէին առաջի իմ, քան զյանկիցս ծանրութեամբ նոցին ոսկի. և ես զգուշութեամբ պահեցի զնոսա վասն սերմանելոյ։ Շ ինեցի արդ զհովանոց մի վասն իմ իբրև երկու մղոնաք հեռաւորութեամբ ի խրճթէ իմմէ. զոր անուանեցի ամարանոց իմ։ Եկի երբեմն ի ջորային եղանակի մանուել, զինեալ հրացանաւ, և կոցնաւ միով, և պաշտպանեալ ի հաւատարիմ շանէս։ Յորժամ անցի ընդ ձորն յորում կանգնէր հովանոց իմ, երևեցաւ

ծոմն , և օրն լինելով պարզ՝ տեսի
պարզապէս զցամաքն յայնկոյս , բայց
արդեօք կղզի՞ էր թէ ցամաք երկիր ,
ո՛չ կարացի իմանալ . որոյ հեռաւորու-
թիւն համարեցի ո՛չ պակաս լինել քան
զքսան փարսախս ։ Յայսմ ճանա-
պարհորդութեան ըմբռնեցի զճաղուկ
մի թութակի , զոր տարայ ի տուն , և
ուսուցի խօսել ։ Ընթացայ իբրև զեր-
կոտասան մղոնս յարևելս կոյս առ
կողով ծովեզերին , և ապա կանգնե-
լով անդ զճող իմն ի նշան , դարձայ
դէպ ի տուն . առաջադրել ինձ ի ճանա-
պարհորդել միւսանգամ ։ Թիկանց
կողմանէ մինչև ի նոյն ճող , դարձայ
ի տուն այլ իմն ճանապարհաւ , բայց
տարաբախտապէս մոլորեցայ . մինչ ի
վերջոյ պարտաւորեցայ գտանել զծով-
եզրն առ ։ի որոնել վասն ճողոյն .
վաստակեալ մերձ ի մահ ի տօթոյ , և

'ի ծանրութենէ զինուցս։ Յայսմ ձա-
նապարհի կալաւ շուն իմ զուլ մի։
զոր պահեցի կենդանի հաճելի յու-
սոմն՝ ունելոյ զհօտ մի ընտանի այ-
ծից։ բայց զի ոչ կարէի ածել ընդ իս
առանց դժուարութեան, և փափա-
քէի լինել 'ի տան, փակեցի զնա 'ի
ներքս անդ հովանոցին իմոյ։

Ոչ կարեմ նկարագրել զզուարճու-
թիւնն՝ զոր զգացի 'ի մտանելս 'ի հիւղ
անդր և յընկողմանիս իմում՝ 'ի մահճի։
Անգեայ զշաբաթ մի, աշխատելով
'ի ծանր գործ շինելոյ զվանդակ իմն
վասն թռչակի իմոյ, որ վարվարակի
եղև մի 'ի սիրելեաց իմոց։ Ի մտաս
ածի արդ զուլն իմ, և խղճուկ անաս-
ունն այնքան հլու եղեալ էր 'ի քաղ-
ցուէն՝ մինչ զի հետևեցաւ ինձ 'ի տուն
նման շան, և 'ի ժամանակէ յայսմանէ
եղև մի 'ի տնայնոցս, և ոչ երբէք հե-

ռանայր յինէն։ Եւ արդ՝ ընթերցող
իմ, տաց քեզ զհամառօտ ինն գծագրուն
կերպարանաց իմոց։ Ունէի զգտակ մի
մեծ՝ բարձր և անձև կազմեալ ի մոր-
թոյ այծեւոյ։ վարսպանակ մի՝ որոյ
քղանցք հասանէին մինչև ի կէս ազ-
դերացս։ և վարտիք կիսասրուն ի
նոյն տեսակէ։ հերք այծեւոյն կախե-
լով մինչ ի կէս ծնգացս։ Զգուլպայ
և զկօշիկ ոչ ունէի։ բայց յօրինեալ
էի զզոյգ մի իրի ինչ։ զոր ոչ իմանայի
զինչ անուանել՝ պատեալ ի վերայ սը-
րունիցս։ որպէս զառնապան։ բայց ա-
մենավայրագ ձևով։ Եւ յիրաւի ամե-
նայն զգեստք իմ այսպէս էին։ Ունէի
զլայն կամար ի չորացեալ այծեւոյ։
յորոյ ի միոյ կողմանէ կախէի զսրոց
և ի միւսմէ՝ զկացին մի։ Ունէի զայլ
կամար ևս։ այնքան լայն պրկեալ ի
թիկանցիս։ Ընդ անթաւս կախեալ

կային երկու պարկքն գնտակի և վա-
ռօղոյ։ Ի վերայ քամակիս տանէի
զզամբիւղ մի, ի վերայ ուսոցս զՀրա-
ցան, և ի վերայ գլխոյս զմեծ՝ զանհե-
թեթ և զտգեղ հովանոց յայծենւոյ։
Մօրուաք իմ փոքրեալք էին. բաց
յայնոցիկ անտի՝ որք բուսանէին ի
վերայ շրթանցս. զորս յօրինեալ էի
ի մեծ ընչացս՝ ըստ տարազու մահմե-
տականաց։ Բայց վասն կերպարա-
նացս՝ քանզի յոյժ սակաւք տեսանէին
զիս, ոչ ինչ փոյթ ունէի։ Այսպիսի
կերպարանաւ յաճախակի յայց ելա-
նէի նաւակին, զոր գտեալ էի ի ծո-
վեզերն, սակաւուք զկնի խորտակման
մեծի նաւուն. և յաւուր միւսմիբրև
ի մէջօրէի յորժամ երթայի առ այն,
սաստիկ զարմացումն կալաւ զիս ի նշա-
մարել զդրոշմ հետոց մարդոյ ի վերայ
գետնի՝ որ պարզ երևէր յաւազին։

Կառուցեալ կանգնեցայ որպէս լըզ-
ջանթահար, ունկն դնէի լուիկ, հայէի
շուրջ զինև, այլ ոչ կարացի լսել
կամ տեսանել ինչ, Եւ ի վերայ բլ-
ոյն հայել ի հեռաստան, յայսկոյս
և յայնկոյս շրջեցայ, բայց լոկ զայն
մի միայն հետան կարացի տեսանել.
Դարձայ վերատին հայիլ յայն. պար-
զապէս երևէր ոտն, մատունք ոտիցն
գարշապարն, և ամենայն մասն անթե-
ւի. այլ թէ ուստի եկն անդ, չգիտեմ.
Բայց փութացայ 'ի տուն յամրոցն
իմ, յետս յետս հայելով յամենայն
յերկուս կամ յերիս ոտնափոխս, և
երև ակայէի զիւրաքանչիւր ծառ,
թուփ և կոճղ՝ որպէս զմարդ. Բուն
չեղէ յայնմ գիշերի, բայց երկիւղ իմ
սակաւ առ սակաւ փարատեցաւ. և ա-
րիացայ գնալ և չափել զնոյն ոտիք
խնդրք, զոր և գտի յոյժ մեծագոյն.

Եւ ի զիս այս վերատին ծաղրալի մտածութեամբք. յորժամ գարձայ ի տուն՝ սկսայ կրկնապատկել զպատնէշս իմ, շարել զեօթանեսին հրացանս ի վերայ կառաց կամ սայլից ըստ տարազու թնդանօթաց, և տարայ անչափ վաստակոց ըստ մի միոյն. յահէ դրոշմի ոսին այնորիկ. Եւ յատկապէս տնկեցի զբազում շերտս արտաքուստ պարսպի իմոյ, որ կանաչելով եղև անտառ խիտ. և բոլորովին ծածկեաց զտեղի առանձնութեան իմոյ. և մեծապէս յաւելաւ յապահովութիւն իմ։

Յաճէի արդ առաւել ևս յարևմտեան ծայր կղզւոյն քան յառաջ. և վաղվաղակի խելամուտ եղէ թէ տեսանել զհետս ոտից մարդոյ չէր այնքան օտար ինձ ի կղզւոջ անդ՝ որպէս կարծէի. զի ի մերձենալս ի ծովեզրն կոյս

իսկապէս զարհուրեցայ և հիացայ տե-
սանելով զերկիրն ծածկեալ գանգիւք ,
ձեռօք , ոտիւք և այլ ոսկերօք մարդ-
կային մարմնոց . և յատկապէս 'ի
աեղւոջն՝ ուր որպէս կարծեմ՝ հուր
հարեալ էին . և շրջան մի փորեալ 'ի
գետնի և վայրագ վայրենեացն շուրջ
նստեալ 'ի տմարդի խրախճանն մար-
մնոց՝ իւրեանց նման ստեղծուածոց .
դարձուցի զերեսս իմ 'ի զարհուրելի
տեսարանէն և թողի զվայրն որքան
փութով և կարեւոր էր։ Յետ սակաւու
'ի սասանիկ մերկայոյ զգիշերի լսիք՝ ընդ-
դոստեայ 'ի թնդմանէ թնդանօթի ի-
սիք , փութայայ 'ի վեր 'ի գլուխ բըլ-
րոյս և լուայ միւս ևս , Երևակայեցի
թէ նշան էր այս նաւի վտանգելոյ՝ որ
և այնպէս եղև . որպէս նշմարեցի 'ի
միւսումն աւուր։ Սասասեցի իսկոյն
գնալ նաւակաւս 'ի վտանգեալ նաւ

անդը, որ սակաւիկ մի հեռի կայր։ Հանդերձի վասն իմ զպաշար կերակրոյ առ երկիւղի վարեալ լինելոյ դէպ ի ծովն, և ի միջոցի երկուց ժամուց հասի ի նաւն՝ որ էր Պանիական։ Խրեալ էր անձողոպրելի ի մէջ երկուց ժայռից. և խելք նաւուն որպէս և յառաջքն խորտակեալ էին ի բեկորս յալեաց ծովուն։ Ընդ մեր ի ձեռնալս շուն մի սկսաւ հաչել և կղկնձալ. բայց ո՛չ գոյր այլ ոք կենդանի ի նաւի անդ։ Տեսի զերկուս արս հեղձեալս ի խոհարանի, աղխեալս քաղկօք ընդ իրեարս, և ամենայն ապրանքն ապականեալ ՝ի ջրոյ։ Օ իարդ և ինչ՝ առի զերկուս յարկեղաց նաւաստեացն ի նաւակ իմ առանց գիտելոյ թէ զինչ գոյր ՝ի նոսա. իբրև ածի ՝ի տուն զկապուտ իմ, և սկսայ դատարկել զտի զսրուակս ինչ լցեալս

կազդուրիչ ըմպելեօք և գքանի մի
կուլակապս և շապիկս՝ որք շատ պի-
տանի էին ինձ։1100 հատս ութանոցի,
և իբրև զմի լտերաչափ ձոյլ ոսկւոյ՝
որք չէին իմիք պիտանացու։ Ո այս
ամենայն տայի սրտի մտօք փոխանակ
երկից կամ չորից զուգաց կօշկաց և գուլ-
պայից։ Յետ այսր առաւելութեան
բաղտի՝ կեայի ըստ հին սովորութեան
իմոյ, թէ և միշտ յահի լեալ յերկիւղէ
վայրենեացն։ Յաւուր միում՝
վաղ քաջ ընդ առաւօտն՝ տեսի 'ի
ցամաքի զհինգ կանովայս 'ի նոցանէ։
Ելի 'ի վերայ բլրոյս և օգնականու-
թեամբ դիտականս, տեսի ոչ պակաս
քան զերեսունս կաքաւել շուրջ զհլ-
ոով։ Ա աղվաղակի յետ այնորիկ
տեսի երկու ողորմելի հոգիս քարշ-
ելս արտաքս 'ի նաւակացն, յոր-
ոց մին իսկոյն զդեռնեցաւ հարուա-

ծով. բայց միւսն պրծանելով ի նոցանէ, վազեաց անհաւատալի երագութեամբ 'ի կողաց աւազոյն դէպ առ խս։

Խոստովանիմ, զի սոսկալով զարհուրեցայ յորժամ տեսի զնա դէպ առ խս գալ, երևակայելով թէ ամենեքին նոքա հետամուտ եղիցին նմա. զիարդ և ինչ կացի ես 'ի տեղւոջ իմում, և անհետ եղև բոլորովին երկիւղ իմ, երբ տեսի զերիս միայն հետևել նըմա։ Ա՞ՀԾապէս յառաջէր նա քան զնոսա, և զոգցեաց զերծանէր 'ի ձեռաց նոցին. 'ի հասանելն 'ի նեղուց անդր, ուր մնեցաւ 'ի մէջն, էանց յայն կոյս, և սկսաւ վազել սրընթաց որպէս յառաջն։ 'Ի հետամտացն երեքունց երկուքն միայն մտին 'ի ջուրն, և միւսն դարձաւ յետս։

Ընդ վաղվաղակի զհ ացանս իմ 'ի

ստորոտէ սանդխոցն, և ինքանելով ի
բլրոյն ընդ կարճոյ ճանապարհ, ան-
ցի ընդ մէջ հետամտացն և փախս-
տականին, գոչելով բարձրաձայն առ
նա որ փախչէրն, և նշանացի առնե-
լով նմա դառնալ յետս։ Այպա յար-
ձակելով միանգամայն ի վերայ յա-
ռաջնոյն՝ գլորեցի զնա յերկիր դաս-
տակաւ հրացանիս, զկայ էառ միւսն
ահաբեկեալ, բայց այն ինչ յառաջէի
դէպ առնա, նշմարեցի զնա պատրաս-
տել զաղեղն իւր նետահար լինել
առիս, յորոյ վերայ սպանի զնա անդէն
հրացանաւ։ Այրագ փախստեայ
խղճուկն այնքան զարհուրեցաւ ի ձայ-
նէ հրացանիս՝ զի թէև տեսանէր
զթշնամիս իւր անկեալս՝ տակաւին ե-
կոց անշարժ և երևէր յաւէտ յօժա-
րեալ ի փախուստ, քան առ իս գալ։
Բայց այրն զոր զգետնեալ էի՝ ուշաբե-

ցելով, վայրագս իմ սկսաւ երկնչիլ 'ի նմանէ։ Ուղղեցի զհրացանս իմ ընդ-դէմ առնն, և խղճուկին այնմիկ՝ զորոյ զկեանս փրկեցի, յակն արկանել 'ի սուր իմ, եւ ետու նմա զոյն. որով 'ի մի հարուած եբարձ զգլուխ թշնամւոյն, և 'ի միում քառորդի ժամու ամենեցուն զերկոսին դիակունսն յաւազի։ Ապա տարայ զնա յայր իմ 'ի հեռագոյն կողմն կղզւոյն, և ետու նմա հաց և զողկոյզ չամչի յուտել, և զջուր՝ որում շատ կարօտէր. և կազդուրելով զնա, նշան արարի նմա ընկողմանել 'ի վերայ յարդի բընձոյ, և խղճուկին արար այնպէս, և ննջեաց։

Բարեդիտակ և գեղեցիկ անձն էր նա, իբրև քսան և վեցամեայ հասակի։ 'Ի գոյն ձիթոյ, երկայն և սեաւ հերօք։ Ունէր զքիթ փոքրիկ՝ որ ոչ էր տափարակ, և զատամունս ընտիրս

իբրև զփղոսկը։ Օ կնի քնելոյ իբրև
զկէս ժամ, զարթեաւ անդրէն և եկն
առ իս վազելով դէպ 'ի ցանկապատ
իմ, Ապա անկանելով յերկիր եղ
զգլուխ իւր 'ի վերայ գեանին՝ յոյր
վերայ եպեալէի զոտս իմ. և յետ այ-
սորիկ եցոյց զամենայն կորևոր նշանս
ընդհակալութեան, հպատակութեան
և հնազանդութեան։ Սկսայ ես խօ-
սել ընդ նմա և ուսուցանել նմա խօ-
սել ընդ իս, և նախ եառ նմա գիտել
թէ անուն իւր կոչեսցի Ուրբաթ 'ի
յիշատակ աւուրն՝ յորում փրկեցի
զկեանս նորա։

Ուսուցի նմա ասել Տէր, զոր ծա-
նուցի թէ լինելոց էր անուն իմ։ 'Ի վա-
ղիւ եառ նմա հանդերձս, առ որ ե-
րևեցաւ հաճեալ։ Կազմեցի զնոքերիկ
վրան արտաքուստ ամրոցի իմոյ վասն
ննջելոյ Ուրբաթու, ես 'ի գիշերի ամ-

վոսիէի զանդուղս իմ'ի ներքս, զի մի կարիցէ յառնել 'ի վերայ իմ'ի ննջելս իմում։ Բայց պիտոյ չէր այս զգուշութիւն. քանզի ոչ ոք կարէր ունել զհաւատարմագոյն ծառայ, որ զնոյն սէր ցուցանէր ինձ որպէս զաւակ մի հօր իւրում։

Գործ իմ եղև ուսուցանել նմա զամենայն ինչ կարևոր առ 'ի առնել զնա պիտանի. յատկապէս զխօսել, և հասկանալ ինձ յորժամ խօսէի, և եղև նա ամենևին յարմար աշակերտ. և այնքան զուարթ, այնքան ժրաջան և այնքան հաճոյ՝ երբ կարէր հասկանալ զխօսս իմ, կամ հասկացուցանել ինձ, մինչ յոյժ ախորժելի ընկերակից եղև ինձ։ Ուրաջի եղի նմա ապա հոսել զսակաւ ինչ ցորեան, և մաղել և յետ այնորիկ ցուցի նմա թրել և թխել զհաց. և յետ սակաւ-

ուց կարող եղև Ալրբաթ առնել զա-
մենայն ինչ վասն իմ, որքան և կա-
ըէի ես ինքնին։ Հարկ եղև ինձ արդ
ունիլ մեծագոյն քանակութիւն ցորե-
նոյ քան յառաջն, որոյ վասն օգնա-
կանութեամբ Ալրբաթու ընդարձա-
կեցի զցանկն իմ. 'ի կարճոյ ասել, ամ
այս էր ամենաքաղցրագոյնն՝ զոր ան-
ցուցի 'ի կղզւոջ այսմիկ, զի որովհե-
տև ծառայ իմ սկսաւ խօսել բարե-
պէս, պիտոյացաւ ինձ լեզու իմ վե-
րստին. և բաց 'ի զուարճութենէն
խօսակցելոյ ընդ նմա, մեծապէս օգ-
տակար լինէի 'ի բարեմտութեան և 'ի սէր
նորա, որ փայլէր առաւելութեամբ
օր ըստ օրէ, մինչև սկսայ իսկապէս
սիրել զնա։

Ա՛յ պակասեցայ յուսուցանելոյ
զխղճուկ արարածն ըստ կարի իմում՝
'ի գլխաւոր մասունս հաւատոյ, որոց

և ունկնդիր լինէր նա ամենայն ուշադրու թեամբ։ Նկարագրեցի առաջի նորա զերկիր Եւրոպայ, մանաւանդ զԱնգղիա. թէ զինչ կայաք, որպէս պաշտէաք զԱստուած, և որպէս վաճառաշահ լինէաք նաւագնացութեամբ ընդ ամենայն կողմունս աշխարհի։ Ի տեսանել զնաւակն իմ, յառեալ եկաց Ուրբաթ ընդ երկար, և ասաց ոչ ինչ։ Իբրև հարցաւ թէ զինչ խոկայր, ասաց հուսկ յետոյ "զայսպիսի նաւակ տեսի ես եկեալ ի հայրենիս իմ։ Ապրեցուցաք զսպիտակ մարդիկն ի հեղձմանէ։"

Ապա հարցի ցնա եթէ զոյին սպիտակ արք՝ որպէս կոչէրն, ի նաւակի անդ։ Այո՛ ասաց նա, լի էր նաւակն սպիտակ արամբք։ Հարցի նմա եթէ քանի՞։ Եցոյց ինձ մատամբ զեօթն և տասն. հարցի ապա զինչ պատահե-

ցաւ նոցա, և պատասխանեաց "կեան և բնակին յազգի իմում։"

Յետ բազում ժամանակաց գալով ի ծայր բլրոյ միոյ յարևելեան կողմ կղզւոյն, ուստի տեսեալ էի զերկիր, տեսի զի նայէր Ուրբաթ մեծաւ անձկանօք դէպ ընդ այն, և յաւիշտակեալ ինն զարմացմամբ սկսաւ ասել և կայթել, գոչելով "Ով երջանկութեանս։ Ո՛վ ուրախութեանս, ահա ազգ իմ։"

Ի ժամանակէ ասի յայսմանէ զմտաւ ածէի դիմադրաւ լինել, և տեսանել եթէ կարէի միաւորիլ ընդ մօրուսաւոր արանց այսոցիկ. ոչ երկբայելով՝ բայց եթէ կարիցուք գտանել զհնարս զերծանելոյ անտի։ Ընտեալ էի այժմ ի 27երրորդ ամ գերութեանս, և խորհէի հուպ ընդ հուպ նաւագնաց լինել, այն ինչ յառաւօ-

տու միում հրամայեցի Ուրբաթու գը-
նալ ի ծովեզրն, և որոնել եթէ գը-
տանիցէ զկրկայ մի։ Բայց չև ան-
ցեալ երկար միջոցաւ, մինչև դարձաւ
վազելով, որպէս ոք որ ոչ զգայցէ
զգետին որոյ վերայ ընթանայր, և
նախքան զժամանակ խօսիլ գտանե-
լոյ իմ, գոչեաց, "Ա՛հ տէր, ո՛հ տէր։
Ա՛հ տրտմութեանս, ահ չարեացս։"
Օ՞ինչ է Ուրբաթ, ասացի, "Ա՛հ օն
անդր են ասաց, մի, երկու, երեք
կանովայք. մի, երկու, երեք։" Ընդ-
Ուրբաթ, ասացի, մի՞ երկնչիր. այլ
նա զարհուրեալ գոչայր։ Երևակայե-
լով թէ եկեալ լցեն յորոնել զինքն
և յօշոտել և ուտել։ Հարցի նմա ե-
թէ ես կայի պաշտպանել զնա՝ կա՞յր և
ինքն ընդ իս, և առնէր ըստ հրամա-
նացս։ Պատասխանեաց մեռայց ես՝
երբ հրամայիցես ինձ մեռանել, տէր։

Բերի նմա զխումմի ցքւոյ , և պատ-
ուիրեցի նմա առնուլ զերկուս հր-
ացանս հաւորական , և լնուլ զնո-
սա մեծամեծ կարապահար գնտակօք։
Ապա լցի և չորս հրացանս՝ իւրաքան-
չիւր հինգ գնտակօք , և զերկուս ա-
տրճանակացն՝ զիւրաքանչիւրսն զոյգ
զոյգ գնտակօք ։ Ածի զմեծ սուր իմ
անպատեան ընդ մէջ . և ետու Ուր-
բաթու զկացին իւր։ Ղունէի զվայր-
կեան մի կորուսանելոյ , զի տան և
ինն 'ի տսկալի վայրագաց անտէ նը-
տեալ էին խառն 'ի խուռն 'ի միասին ,
և այլ երկուք խոնարհեալ էին լու-
ծանել զկապանս Քրիստոնէի միոյ՝
որ էր մի 'ի խղճալի գերեացն՝ Սպանի-
ացի ազգաւ , զի սպանցեն զնա ։ Ընդ՝
ասացի ես , Ուրբաթ , արա՛ որպէս
տեսանես զիս առնել ։ Եդի զհրա-
ցանսն 'ի վայր և առի զմին , և ապա

ի միասին արձակեցաք։ Երբեք ի նոցանէ մեռան և հինգք վիրաւորեցան։ Ապա արտաքս ի մայաւէն յարձակեցաք՝ իւրաքանչիւր զհրացան ի ձեռին մերում։ Հատի զպրտուեայ չուանն որով կապէր եղկելին, և ետու նմա զսուր մի և զաստրճանակ, զորս իբրև ընկալաւ՝ անդէն յարձակեցաւ ի վերայ սպանողացն իւրոց։ Յայնժամ Ուրբաթու արձակեալ հրացան իւր սպան զերկուս ևս, և վիրաւորեաց զերրորդ մի, և ապա անկաւ ի վերայ նոցա կացնաւ իւրով. ի կարճոյ եօթն և տասն ի նոցանէ անկան մեռեալք, և չորք միայն զերծանելով ի կանուվայս իւրեանց՝ փախեան դէպ ի ծովն կոյս։

Որոշեցի ի մոի հետամուտ լինել նոցա, զի մի գուցէ դարձցին առաւելագոյն զօրութեամբ կորուսանել զմեզ։

Ասուցեալ 'ի կանովայ մի, կոչեցի զՈՒրբաթ հետևել ինձ։ Բայց անդէն ընդ մտանելս 'ի կանովայն գտի անդ զմիւս մի յեղկելեացն կենդանի կապեալ ձեռօք և ոտիւք։

Հատի վաղվաղակի զոլորեալ վառսրն, և գտեալ զնա այնքան սաստիկս կաշկանդեալ՝ մինչ երևել նուազեալ 'ի մահ, ետու նմա զումպն, և հրամայեցի ՈՒրբաթու ազդ առնել նմա թէ ազատ էր այնուհետև։ Այլ իբրև հայեցաւ նա ընդ երեսս կապելոյն և լուաւ նմա խօսել, զարտասուս ամենեցուն շարժէր՝ որոց եթէ տեսանէին թէ զիարդ համբուրէր, գրկէր, կոկանէր, կայթէր, երգէր և դարձեալ անդրէն արտասուէր։ Դամանակ էանց մինչ կարացի իմանալ թէ զինչ առիթ այսքան զանազան կրից։ Զուս մի ասեր, թէ կապեալն հայր ՈՒր-

քաթու էր, առ որով նստեալ նորա
գգլուխն եդ ի վերայ կրծոց իւրոց և
սկսաւ շփել զտեղիս կապանացն՝ որք
կորդացեալք էին ի խստութենէ։ Ակ-
նարկութեամբ լմով տարաւ Ուրբաթ
զԱպանիացին ի կանովայն, և զետե-
ղեաց առ հարք իւրով՝ ապա մեալով ի
ջուրն, սկսաւ քերել առ ծովեզերքն
մինչև եբեր զնոսա մերձ յամրոց իմ։
այն ինչ ես քայլեցի անդր։ Իբրև
ութն աւուրքք յետ գնալոյ նոցա առ
ի քերել զընկերս իւրեանց յայսկոյս
զարթայց զիս Ուրբաթ յառաւօտու
միւսմ գոչելով, Տէր եկին նոքա։ Ակ-
կի զհանդերձ զենև, փութացայ 'ի
ծայր բլրոյն, և պարզաբար նշմարեցի
զԱնգղիացի նաւ մի խարխեալ անդր։
'Ի սկզբան յարեաւ 'ի միտս իմ աղմուկ
ուրախութեան, որ փութով փոխե-
ցաւ յերկիւղ. զի թէպէտև գիտացի

զնոսա զոլ հայրենակիցս իմ, սակայն պատճառս ունէի երկնչելոյ ի թշնամութենէ։ Փոխանակ ընդ առաջ գնալոյ նոցա որպէս պարտ էր ինձ առնել, թէ չէր վասն ահացուցիչ կասկածանացս, մնացի ուր էի, և վաղվաղակի յայտնի եղև, զի կասկածանացս այսոցիկ իմոց պարտական եղէ վասն փրկութեանս։

Ո՞ղեցին զնաւակն ի ցամաք ի վերայ ծովեզերն, և մեռասան արք իջին ի վայր, յորոց երեքն անզէնք էին, զորս ի շարժմանէն նոցին մակաբերեցի զոլ կալանաւորս, և զմին ի նոցանէ կարէի նշմարել ի կիր առեալ զազգու ձեռնարկութիւնս աղաչանաց՝ որտմութեան և յուսահատութեան, այն ինչ միւս երկուքն՝ որոց տխրութիւն պակասթուէր, երև էին աղերս արկանել վասն զթութեան։ Ի տե

պիլս այս ընդարմացայ արհաւրօք։
և Ուրբաթ ասաց ցիս բեկբեկ բարբառով իւրով Անգղիերէն, Ո՞վ տէր տեսանես զի և Անգղիացիք ուտեն զկալանաւորսն ըստ վայրենեաց։ Ո՛չ։ ո՛չ։ ասացի ես, Ուրբաթ։ երկնչիմ զի սպանցեն զնոսա, բայց հաւաստի լեր որ ո՛չ կերիցեն։ Յայսմ վայրկենի տեսի զանօրէն ոմն ամբառնալ զբազուկ իւր առ 'ի սպանանել զմի 'ի կալանաւորացն, բայց ո՛չ սպան։ ըղձանայի այժմ Սպանիացւոյն և հօրն Ուրբաթու՝ որ գնացեալ էր ընդ նմա։

'Ի բանախօսութեան անդ ընդ կալանաւորացն տեղի ետուն ջուրք 'ի նաւակէ անտի՝ և ամենեքեան նստաւ 'ի ցամաքի, և լուայ 'ի միոջէն ասել ցընկեր իւր որ գնայր անդր թէ՝ թող Ջ էկ 'ի մակընթացութեան ամբարձցի անդրէն։ որով հաւաստի եղէ թէ հայրե-

նակեցք իմ էին նոքա։ Դիտացի արդ՝ ի մտատանջութիւն իմ, թէ ունէին նոքա զտան ժամն աստանդական շըրջելոյ շուրջ զկղզեաւն։ Վասն որոյ որոշեցի յարձակել ի վերայ նոցա վաղվաղակի յետ արևուն ի մութն մըտանելոյ։

Բայց յետ քանի մի ժամուց չտեսանելով իմ զոք ի նոցանէ աստանդական՝ կարծեցի թէ ի քուն էին մտեալք ամենեքին՝ բայց յերկից տառապեալ պանցն, որք էին ընդ Հովանեաւ ծառոյ մոյ փոքր ինչ հեռի յինէն։

Ընդ նոսա գնացի ես Ուրբաթաւ հանդերձ, և ասացի Սպանիերէն, ով էք դուք Պարոնայք։ աղմկեցան նոքա ի ձայնէս։ բայց յորժամ տեսին զայլանդակ կերպարան իմ՝ պատրաստեցան փախչել։

Ասացի ապա Անգլիերէն՝ Պարոնայք

գուցէ ունիջիք զբարեկամ ոք առ ձեզ՝ որում սակաւ ակն ունիցիք։ Ընդաքեալ ուրեմն յերկնից, ասաց մեր Ի Նոցանէ խոնարհելով. զի վիճակ մեր անցեալ է զզօրութեամբ մարդկան։ Ընդ մենայն օգնութիւն յերկնից է՝ Պարոն, դարձուցի ես. տեսանեմ զի դու Ի Նեղութեան ես. և ես յօժար եմ ծառայել քեզ։ Ընդ այն տառապեալ հեղիղօք արտասուաց պատասխանեաց՝ ընդ մարդոյ թէ ընդ հրեշտակի բարբառիմ ես։ Մարդոյ և Ընդդիմացուոյ, պատասխանեցի ես, որ պատրաստ է առ Ի օգնել և փրկել զքեզ. ասա ինձ զանցս քո։ Հրամանատար էի նաւուն այնորիկ, ասաց նա, ապստամբեցան նաւազինք ընդդէմ իմ. և եթէ չսպանանիցեն, տակաւին կամին թողուլ զիս և զայս երկու Պարոնայս յայսմ ամայի տեղւոջ։ Ընդ հա Ի թաւուտ անդր

են, և գողամ եթէ տեսեալ լցին զքեզ
և լուեալ զխօսել մեր. եթէ այդպէս՝
ապացեն զամենեսին զմեզ։ Ոչ տրցի
զինչ զէնս ունէին, և տեսանելով
եթէ զմի միայն հրացան ունէին ի միջի
իւրեանց, ասացի նմա, եթէ գիւրին
էր սպանանել զնոսա ի քուն կամ կա-
լանաւորել։ Պատասխանի արար թէ
անուղղայք երկուք էին ի միջի նոցա՝
որոց և ապահով չէր ցուցանել զգթութիւն։ Ապա եռու միոյ միոյ ի նոցա-
նէ զհրացան մի, և խորհուրդ եռու արձակել ի մէջ նոցա միահաղոյն, բայց
խղճայր նա ի հեղլոյ զարիւն։ Ի մէջ
զուցատրութեան մի բուռ ոսկանք ի
նոցանէ զարթեան և երկուք ոսկանք
մեկնեցան ի միւսոցն։ Նաև ապետն
ասաց՝ ուրախութեամբ ներէր նոցա։
Ուրդ՝ ասացի ես, թէ ճնցեալքն
Հոլոպրիցին, յանցանք քո եղիցին։

Յորդորեալ այսու՝ մատեան Նոքա առ Նաւավարն, և Նաւապետն պա-հելով զիւր հրացան, երկոքին արքն գնտակահար սպանին զմի ի չարագործացն, և զմիւսն վիրաւորեցին։ Նա որ վիրաւորեցաւն կոչեաց զայլս յօգնութիւն, այլ Նաւապետն զգետնեաց զնա հարուածով դաստակի հրացանի իւրոյ։ Ելին և այլ երեք ի խմբի անդ՝ յորոց մին վիրաւորեալ էր։ Ընդաջեցին Նոքա վասն գթութեան. և իմ'ի վերայ հասեալ հրաման ետու խնայելոյ ի կեանս Նոցա, դաշամբ կապելոյ զձեռս և զոտս Նոցա, որքան որ կացցեն ի կղզւոջն։

Թնդիւն հրացանաց մերոց երբեր զայլ ևս երիս թափառականս առ մեզ. որոց յանձն առնլով զկապիլն, յաղթութիւն մեր եղև կատարեալ։ Բացաք զմեծ ծակ ի յատակ նաւակին.

զի մի կարասցեն տանել զնա։ Եւ
յորժամ առնէաք այնպէս՝ լուաք
զորոտումն թնդանօթոյ ի նաւէն, ի
նշան նաւակին դառնալոյ անդրէն ի
նաւն։ Յետ սակաւուց այլ նաւակ
մի տան արամբք և հրացանօք մեր-
ձեցան ի յամնաքն։ Որք ելին ի յա-
մնաք՝ կացին ի միասին, ելանելով ի
վերայ փոքրիկ բլրոյն՝ յորոյ ներքոյ
քնակութիւն իմ անկանէր։ Եբրև
ելին ի վեր՝ սկսան գոչել և կանչել,
քայց ոչ ելիսէին հեռանալ ի ծովեզ-
րէն, և դարձան յետս փութով։
Հրամայեցի ապա Ուրբաթու և երկ-
րորդի նաւապետին ելանել ի բարձր
ինչ տեղի, և գոչել բարձրաձայն ըստ
կարի։ Լուան նոքա զձայնն և վազե-
ցին դէպ առ այն, մինչև եկին յա-
ռուսին, ապա կոչեցին զնաւակն առ
ի անցու ցանել զի քեանս յայնկոյս։

Այս էր որում ես ակնկալէի։ Ընցանելով ընդ առուակն՝ թողին զերկուս արս 'ի նաւակին, տանելով ըզմիւսն ընդ ինքեանց։ Թողաք զԱրբաթ և զերկրորդն նաւապետին հետամուտ լինել գործոյ իւրեանց, թակարդել զանոպայն 'ի մայառին, գոչելով և ձայն տալով. այն ինչ մեք յանկարծակի հասաք 'ի վերայ երկուց արանցն՝ զորս թողեալէին զկնի։ Մին ընկողմնեալ 'ի նաւակին, և միւսն 'ի քուն 'ի ցամաքի. վերջինն ոստեաւ, զոր զգետնեաց նաւապետն, և կոչեաց զնա որ 'ի նաւակին անձնատուր լինել, ապա թէ ոչ ընդ մեռեալս համարիւր։ Օ այս արար նա, և բոլորով սրտիւ միացաւ ընդ մեզ. զոլով նորա մի 'ի նոցանէ որ բռնադատեալ յերկիւղէ, միաւորեալէին ընդ ապստամբս։ 'Ի վերջոյ տեսաք

զամենեսին դառնալ առ նաւակն, որ
նստեալ էր ի ցամաքի յառուի անդր,
ի տեղատուութենէ ջրոյն։ Սկսան ձայն
տալ և կոչել զընկերս իւրեանց յան-
ուանէ, և ապա վազս առին յայս
կոյս և յայնկոյս, ծափս հարկանե-
լով ըստ օրինակի արանց յուսահա-
տելոց։ Սկսաւ մութն անկանել, և
ես մերձեցուցի զդարանն և ևս, հրա-
մայեցի Ուրբաթու և նաւապետին
յափսիթերս գնալ, զի մի նշմարիցին,
և մերձենալ նոցա յոյժ նախ քան
զհրացանաձիգ լինել։ Բայց մի ի պա-
րագլխոց ապստամբութեանն՝ երկո-
քումբ նաւաստեօք մերձեցաւ առ
մեզ, և նաւապետն չժուժելով՝ ի տե-
սանել գնա յիւրում բուին, իսկոյն
հրձիգ եղև, և ապան անդէն գնա և
գմիւս մի, երրորդն սկսաւ փախչել։
Յառաջեցի ապա բովանդակ զօրօք

խնամք, և այն զոր հանաք ի նաւա-
կէն կոչեաց Հրամանաւ խնամ զմի 'ի
նոցանէ՝ Թոմմա Սմիթ։ Եւ նա
պատասխանեաց, Ո՞վ ես դու։ Ո՞ռ-
պէնսո՞ն։ Պատասխանի արար միւսն,
այո՛ այո՛, ի սէր Աստուծոյ Թոմմա՝
մրկ զզէնս քո և անձնատուր լիր։
ապա թէ ոչ մեռանիք ամենեքեան ի
սմին այսմիկ վայրկենի։ Անձնատուր,
ուստ պիտի անձնատուր լիցուք, ասաց
Սմիթ։ Ուր են նոքա։—Ահա ասաց
միւսն, ահա նաւապետն մեր հանդերձ
յիսուն արամբք ընդ իւր։ Նաւաստեաց
դլխաւորն և Ալ Ֆրոյ Սպանիա-
ցին, և ես եմք կալանաւոր։—Շնոր-
հեսցէն մեզ զկեանս մեր՝ եհարց Սմիթ։
Յայնմ վայրի սկսաւ նաւապետն խօ-
սել՝ ճանաչէս զձայն իմ։ եթէ զինա-
թափ լինիցիք և հնազանդեսցիք, ա-
մենեցուն ձեր շնորհեսցին կեանք։ բայց

Ի Վիլիամ Ատկինսոնէ։ Օ՜ որ լուեա
Վիլիամ Ատկինսոն գոչեաց՝ 'ի սէր
Աստուծոյ՝ նաւապետ։ խնայեա՛ յիս։
այլք ամենեքին չին լաւագոյն քան
զիս։ Ու ճշմարիտ էր, քանզի 'ի սկզ-
բան ապստամբութեան յոյժ չարա-
չար էր վարեալ սա ընդ նաւապետին։
Ասաց ցնա նաւապետն, անձնատուր
լինիս ըստ կամս, և ապաւինիս 'ի գը-
թութիւն երկրապետին։ Ընդանդե-
ցան ամենեքին։ Ուրեմն արդ տիրել
նաւուն, և ընտրեաց նաւապետն ըզ-
հինգ ոգիս զորս յարմարագոյն համա-
րեցաւ առ 'ի օգնել ինքեան, մինչ
ես պահեցի զմնացեալսն 'ի պատանդ
վասն հաւատարմութեան նոցին։
Յետ այսորիկ կարկատեցաք զձեղ-
քուած նաւակին, և բաժանելով զար-
սըն 'ի նաւակս երկուսին, դարձաւ
նաւապետն 'ի նաւն 'ի մէջ գիշերի

ել 'ի վերս, հաւատարմաբար օգնեալ գոլով, զգետնեցին զերբորդ նաւապետին և զհիւսն դատակաւ հրացանաց իւրեանց, և վաղվաղակի յաղթեցին մնացելոցն։

'Ի վաղիւ անդր գնացին ևս 'ի նաւն, տանելով զՈՒրբաթ ընդ իս, բայց ոչ առագաստեցաք 'ի նմին գիշերի։ Եւ նախ քան զմեկնիլն մեր, երկու յարանց անտի լողալով 'ի ցամաքէն եկին առ մեզ, աղաչեցին ընդունիլ 'ի ներքս՝ ապա թէ ոչ սպանանիցին։ Հաւանեցան ընդ այն, որք յետ այնորիկ եղեն բարեբարոյք։ 'Ի միւսոյ կողմանէ որք երկուք որ 'ի նաւուն անդ, երկնչելով 'ի դատապարտիլն յԱնգղիա, առին զնաւակն, և միացան ընդ հին ընկերակիցս իւրեանց 'ի ցամաքի։ Այս օրինակ մեկնեցայ 'ի կղզւոյն յետ քան և ութն ամաց։

Ի ժամանիլ ի հայրենիս իմ ի Ամբերդ՝ գտի զծերունազարդ հայր իմ կենդանի, մայրս վաղճանեալ էր յամաց հետէ։ Յապուշ կրթեցաւ Ուրբաթ ի տեսանել զքաղաք Եւրոպական, և ոչ կարէր յագենալ տեսարանօքն։ Օ կնի վաղճանի հօրս՝ անկաւ ի սիրտ իմ յայց ելանել վերստին սիրեցեալ կղզւոյս, ուր քաղմացեալ գտի զթողեալսն անգէն. զի խորտակելով երբեմն զյարձակումն վայրենեաց՝ կալանաւորեալ էին զարս և զկանայս և բնակեցուցեալ առ տեղեաւն։ Յայսմանէ սիրտ առեալ՝ բերել ետու զհատուած իմն Եւրոպացւոց Ամերիկոյ, հանդերձ քահանայիւ, որոց վասն գործիս երկրագործութեան և զայլ պիտոյս ածել ետու։ Յօրինեցի ևս կարգս կառավարութեան, և ընտրեցի զխոհեմա-

զոյնն ի նոցանէ ինձ ի տեղակալ, և ի ծերութեան իմում ուրախ եղէ տեսանել զամայի կղզին լցեալ մարդկամբք, որք անցուցանէին զաւուրս իւրեանց անդորրութեամբ։

ՎԱԽՃԱՆ

ԽԱԺԱԿ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԽԱԺԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

ԽԱՃԱԿ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԽԱՃԱԿ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

2ccc7